

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԻԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԵՏԵՒԱՆՔԸ

«Ռուսիա Հայաստանը պիտի գրաւէ», ահա բազմաբան հաւատք մը որուն սխալահանութիւնը կասկածի ենթարկելը զժուար է: Բայց իբր անսխալական ճշմարտութիւն ընդունուած է նաև թէ Ռուսը Պոլիսն ալ պիտի գրաւէ. սակայն յայտնի չէ թէ երբ: Քսան տարի առաջ ուստական բանակը Սան—Սթեփանոս եկաւ, ու անդին ալ Հայաստանին տիրեց, բայց Պերլինի վեհաժողովը առօրէ փառօր ետ դարձաց աշխարհակալող յաղթականները: Ռուսը սակայն անընդհատ իր նպատակին կը դիմէ, ինչպէս որ ալ Եւրոպան անընդհատ Ռուսիոյ դէմ կը կանգնի: Որո՞նք պիտի մնայ վերջնական յաղթանակը. մենամարտին ելքը ոչ ոք կրնայ գուշակել, վասն զի կոխը կը շարունակուի դարերէ ի վեր երկու կողմէն ալ հաւասար ճարտարութեամբ և հաւասար ուժերով: Ռուսիա մինչև հիմա մեծամեծ յաջողութիւններ ձեռք բերած է: Այլ յաջողութիւնները սակայն միշտ նպաստաւոր չեղան Ռուսիոյ յոյսերուն. Եւրոպական թիւրքիայէն անջատուած պետութիւնները աւելի՛ պատուար են Ռուսիոյ դէպի Պոլիս յառաջացումին դէմ քան թէ յառաջընթացներ: Երբ Պուլկարիան ազատեցաւ կը կարծուէր թէ շուտով ուստական նահանգի մը պիտի վերածուի, կամ Ռուսիոյ ռահվիրան պիտի ըլլայ: Ռուսեթիրք պատերազմէն վեց տարի ետքը Պուլկարիա Ռուսիոյ հակառակորդներուն ձեռքը անցած էր քաղաքականապէս. յետոյ ազատարարին եւ ազատագրեալին միջև հաշտութիւնը կնքուեցաւ, բայց հաւանական չէ որ մօտաւոր ապագայի մը մէջ ուստական կուսակալ մը նստի Սոֆիա:

Ամենուս պիտեցած այս պատմական իրողութիւնները կրնան մեզի յուսալքել թէ անհաւանական չէ որ Հայաստանի ուսացումը յետաձգուի երկար ատենի համար: Բայց գիտենք նաև թէ Ռուսերը որպիսի յամառութեամբ, խելքով եւ քաղաքական անխղճութեամբ կը դիմեն իրենց նպատակին: Այսօր մեզի, Հայերուս, վիճակուած է ուստական շահերը նպաստաւորել. մեր կորուստները շատ մեծ են. բայց ինչ փոխարինութիւն կը սպասենք: Այլապէս կանխապաշտակելու համար եթէ երբեմն երբեմն յիշենք եօթնամասուն տարիէ ի վեր մեզի նկատմամբ Ռուսիոյ վարմունքը օր մը չենք ըսեր թէ խաբուեցանք: Ռուսերուն ձեռքէն բռնած առաջնորդեցինք իրենց թրքական և պարսկական Հայաստան, եւ սակայն մեր ազգայնութեան ա-

նողոր թշնամիները Ռուսերը եղան, եւ ասիկա ալ բնական երեւոյթ մըն է. ուրիշ ազգերու տիրապետող ժողովուրդ մը անոնց իր մէջ ձուլումին կը հետամտի: Այն օրը որ Ռուսերը գրաւեն Հայաստանը՝ ինչ պիտի ըլլայ Հայոց վիճակը:

Հայաստանի գրաւումը Ռուսերէն՝ շատերուն կարծիքով Հայոց համար մեծ բարեք մը պիտի ըլլայ: Այս համոզումը թրքահայատակ Հայաստանի մէջ բուսական տարածուած է, եւ մասամբ ալ կալիփան խնդիրը մեծ կարեւորութիւն ունի, և աւելորդ չեմ սեպել յիշատակել այսօր այն տեսութիւնները որ 1890ին թիֆլիս պարզեցիլ գումարումի մը մէջ ուր լրջօրէն կը վիճաբանուէր ուստական աշխարհակալութեան Հայոց հավար յուսացուած օգուտներուն շուրջը:

Ռուսաւոր Հայերը իրենց փաստերը կը հիմնեն այն բարեկաւ վիճակին վրայ որուն հասած էին Ռուսաստանի Հայերը յորմէ հեռէ պարսկական Հայաստանը եւ վրաստանը ուստական նահանգներ եղան:

— Հայոց թիւը զգալի կերպով աճեցաւ, նիւթական վիճակինս զերազանցօրէն բարւոքեցաւ, եւ բարոյական զարգացումիս վերին աստիճանի զոհացուցիչ է, կ'ըսեն. Ռուսական տիրապետութեան տակ վաթսուն տարուան մէջ ամենամեծ յառաջգիժութիւններ բրինք, եւ տարակարգ շունինք որ թրքական Հայաստանն ալ կ'էս դարու մէջ պիտի արժանանայ մեր բազմին, սկսեալ այն օրէն ուր Ռուսերը սարքերնին հան գնեն:

Այս համոզիչ փաստերուն դէմ՝ իմ պատասխանս եւ զաւ.

— Ռուսական կառավարութիւնը եթէ մինչև հիմա շարունակել Հայոց նկատմամբ այն քաղաքականութիւնը որ եթէ ոչ իր ամբողջութեանը բայց քանի մը պիտաւոր գծերուն մէջ նպաստաւոր էր լեզի, ան ատեն կրնայինք թերեւս գտնէ աստիճան մը ձեզի համակարծիք ընթանալ. և սակայն Ռուսիոյ վարմունքը մեզի նկատմամբ հետզհետէ դէպի յոռեղջում մղուեցաւ, անընդհատ շարունակութեամբ: Հայ ազգութեան դէմ թշնամութիւնը ահա վեց տարիէ ի վեր մանաւանդ հզօրապէս կը շեշտուի: Վարանձոֆ, Տանտուկոֆ—կորսակոֆ երկու հակառակորդներ են. եւ անտարակարգ վաթսուն տարի առաջ Տանտուկոֆ—կորսակոֆ՝ պիտի ըլլար Վարանձոֆ մը. և եթէ կովկասի կուսակալը այսօր Վարանձոֆ կոչուէր՝ իր քաղաքականութիւնը չի պիտի տարբերէր այս օրուան ուղղութեան: Վարանձոֆ Հայոց աջակցեցաւ տիրապետելու համար վրաստանի բնիկ տարրը, վրացի ժողովուրդը: Երկրին անտեսական հանգամանքները, ցեղերու փոխադարձ արամազրուութիւնները, նոր տիրապետութեան մը սկզբնաւորութիւնը

կը պարտաւորէին Ռուսիան մասամբ կրթնիլ այն տարրին վրայ որ իր խելքովը, ճարպիկութեամբը եւ անկեղծ ուստասիրութեամբը շատ պիտի դիւրացնէր աշխարհակալող ցեղին տիրապետութիւնը: Բայց այսօր Ռուսիա կը ջանայ Հայերը բոլորովին ուսացնել, եւ ահա պարոցները մեր ձեռքէն կը խլէ, եւ կամաց կամաց այդ ճամբուն մէջ պիտի յառաջանայ: Թրքական Հայաստանին զրաւումին օրը Տնտեսական քաղաքականութիւնն է որ պիտի տիրապետէ եւ ոչ թէ Վարանձոփիւնը: Հայ ազգայնութեան համար ամենամեծ վտանգը պէտք է վտանանք Հայաստանի ուսացումէն:

Այդ օրէն ի վեր ուսական կառավարութեան ընթացքը, թէ՛ թրքահայտակ եւ թէ՛ ուսահայտակ Հայերուն նկատմամբ, հետզհետէ աւելի կը հաստատէ ուսական քաղաքականութեան դէմ այս սեսութիւնները:



Երբ Ռուսիա Հայաստանը գրաւէ մեզի դէմ հալածումը պիտի սկսի թէ՛ սնտեսապէս եւ թէ՛ բարոյապէս:

Ռուսական կառավարութիւնը շատ կը վտանայ հայ երկրին մէջ ամփոփ հոծ հայութիւնն ուր, ուստի եւ մեզի մեր հողերէն զրկելով ցանուցիր ընելը մեզի ուսացնելու ծրագրին կենսական մաս կը կազմէ: Թիւրքեւուս պատերազմէն ետքը երբ Ռուսիա տիրեց Կարսի նահանգին, թող չի տուաւ որ նոյն իսկ Կովկասի Հայերը զան եւ հող ստանան իրենց Հայաստանին մէջ: Թոյլատուութիւնը Յոյներուն եւ Ռուսերուն միայն եղաւ: Այս զրկանքը աչքի կը զարնէ մասնաւորապէս այն պատճառով որ Հայերը հողի կողմէն շատ նեղն են Կովկաս. վաթսուն տարուան մէջ բազմացած են ու տեղ չունին. կառավարութիւնը մեծամեծ դիւրութիւններ կ'ընծայէ Հայերուն եթէ անդրկասպեան երկիրները անցնին, եւ հիմա որ Սիպերիոյ երկաթուղին ալ շինուեցաւ, Հայերուն նիւթական բարեբասութիւն ալ կ'ապահովէ եթէ իրենց երկրէն դուրս ելլեն, ցանուցիր բլլան:

Տաճիկներն ալ միեւնոյն ընթացքին հետեւած են մեզի նկատմամբ: Պէտք է դիտել թէ Հայերը իրենց երկրէն ո'րքան հեռանան, բազմաթիւ այնքան աւելի նուազ կը ստապին Թիւրքիոյ մէջ: Նիկոմիդիա, Պրուսա, Ռոտտութօ, Իզմիր, Պալիս (վերջին զէպքերէն առաջ) Հայերը շատ աւելի հանգիստ եղած են քան թէ Վան, Մուշ, Էրզրում. եւ սակայն միեւնոյն կառավարութիւնն է: Ու եթէ այսօր Հայաստանէն հայ գաղթականութիւն մը Պասրա կամ Էլմէն երթալ ուզէ, Դուռը մեծամեծ դիւրութիւններ կ'ընծայէ եւ հայրախնամ իշխանութիւն մը կը դառնայ ան տեղուանքը:

Մեզի համար ուրեմն անտարակուսելի է որ ուսական Հայաստանի մէջ այլ եւս Հայերուն բազմացումի դիւրութիւնը շատ կը տկարանայ երբ հողը կը զլացուի իրենց:

Այն օրը որ Ռուսերը իրենց ոտքը թրքահայտակ Հայաստան գնեն, այն օրը հոն ալ սնտեսական հալածանքը պիտի սկսի մեզի դէմ: Թիւրք կառավարութիւնը արդէն ինքն ալ հետեւած է, բայց մասամբ միայն, ու-

սական գրութեան: Չէրքէզը, Բուսկիի իսլամը, ամէն ցեղէ եւ կրօնքէ գաղթականներ հետզհետէ հայկական երկիրները լեցնելով Դուռը ուզած է մեզի ալ պատել պաշարել երկաթէ շրջանակի մը մէջ. բայց մինչդեռ հիմա շատ դիւրութիւններ ունինք մեր բնիկ երկիրը հողատէր դառնալու, այդ արտօնութիւնը Ռուսերը պիտի զլանան մեզի, ինչպէս կը զլանան Կովկասի Հայերուն:

Հայ ազգայնութիւնը ջնջելու ուստիան ծրագրին մէջ գլխաւոր տեղը կը բռնէ մեր փաստիւր իսլամական ցեղերուն շոքալած տաւելութիւնը: Երբ Ռուսերը թրքահայտակ Հայաստանին ալ տիրին իսլամներուն է որ բարեկամական ձեռք պիտի կարկառեն, անոնց վրայ է որ իրենց հովանին պիտի տարածեն, իսկ մեզի դէմ հալածանք միայն: Անցեալը յիշելու ենք: Երբ Հայերը ամէն կերպով Ռուսերուն դիւրացուցին պարսկական Հայաստանի զրաւումը, յալթանակէն ետքը տիրապետողները մեզի սանակոսի ընելով իսլամը առաջ քաշելու աշխատեցան: Բաֆֆիի պատմական գրութիւնները կրնան մեզի լուսաւորել այս մասին: Գիտենք թէ Ռուսիա հրատարակուած ո' եւ զիրք ո'րպէս ի խիստ քննութեան կ'անցնի, բայց եւ այնպէս պատմաբանը յաջողած է ազգաբարութիւններ սարգեցնել: Խամայի Մելիքութեանէն առաջ բերենք հետեւեալ դիտողութիւնները որոնք իրենց քողարկեալ դարձուածքին տակ շատ բան կը հասկնան: Տեղեկութիւնները կը վերաբերին այն թուականին երբ ալ Ռուսերը բոլորովին տէր եղած էին Երեւանեան նահանգին եւ մելիքներու երկրին: Ահա ինչ կ'ըսէ Բաֆֆի.

«Ռուսաց նոր տիրապետութիւնն այդ ժամանակ դ «այն աստիճան անհաստատ գրութեան մէջ էր որ Ռուսերը ո'չ միայն ժամանակ չունէին, այլ մինչեւ անգամ «հարկաւոր չէին համարում մելիքների եւ խանների կառուածական վէճերի մէջ մտնել, եւ այդ էր պատճառը, «որ մելիքներից շատերը կորցրին իրանց ընդարձակ «կալուածները, կամ ձեռք բերեցին նրանց մի մասը մի «այն: Ինչպէս ասում են, խանների «խաթրին» այդ ժամանակ չէին ուզում դաշիլ. հայ հաւատարիմ, քրիստոնե «եայ մելիքներին շողոքորթել հարկ չկար:»

Ուրիշ տեղ մը Բաֆֆի խօսելով իսլամներուն հետ Ռուսերուն բարեկամական վարմունքին վրայ, դառնութեամբ կը շեշտէ. «Այսպէս էին վարվում մահմետական «ների հետ, իսկ Հայերի համար ասում էին սրանք «մերն են:»

Ռուսերուն այս հակաքրիստոնեայ քաղաքականութիւնը շատ բնական երեւոյթ է: Իսլամները աշխարհակալող ցեղը վրդովելու ո' եւ է բարձր ձգտում չունին: Յառաջդիմութեան անընդունակ, ազատութեան անհոգ, առանց ո' եւ է ազգային իտէականի, պատմական յիշատակներէ զուրկ, տեսակ մը խօսուն կենդանիներ են: Ասոնց հանգստութիւն ու բարեկեցութիւն ապահովելով, եւ մինչեւ աստիճան մը ուժ տալով անոնց քրիստոնեաներու վրայ գերիշխանութեան շարունակութեանը, Ռուսերը շատ լաւ աջակիցներ կ'ունենան մեզի դէմ: Իսկ Հայը աւելի կամակորովութեամբ իր ցեղային ինքնապահպանութեանը

կը հետամտի, իր անցեալը միշտ կը յիշէ, կարգ մը առաւելութիւններ վայելելու կը հետամտի, ու իր ներքին գործերուն համար տեսակ մը ինքնօրինութիւն կ'ուզէ ապահովել: Ռուսերը կոչվիտսի համար հայ տարրը վտանգաւոր կը համարին. ռուսական մասուլին մէկ մասը տենէ մը ի վեր է կը քարոզէ Հայերն ալ այնպէս հալածել ինչպէս հալածեցին Հրեաները: Եւ Ռուսիոյ պետական անձնաւորութիւններն անգամ կ'ըսեն թէ «առանց թիւրքիոյ Հայերուն ալ արդէն պէտք եղածն աւելի Հայ ունինք, եւ մեզի շատ փորձանք են:» 1895-96ի ջարդերը ապագային համար բաւական թեթեւացի Ռուսիոյ մտահոգութիւնը:

Հարկ չեմ տեսներ, զոնէ առայժմ, խօսիլ այն բարոյական հալածանքին վրայ որուն, տասնըհինգ տարիէ ի վեր է մանաւանդ, ենթարկուած են կոչվիտսի Հայերը: Հայերուն ռուսացումին ամէնէն ապահով միջոցը դպրոցներու ռուսացումն է: Եւ այսօր երկու երեք դպրոց միայն կը մնան Հայերուն ձեռքը, անոնք ալ իբր եկեղեցական պատրաստելու կոչուած, իսկ ամբողջ մեր կրթական հաստատութիւնները ռուսացած են:

Միայն անտեսական հալածանքին վրայ կը ծանրանամ, վասն զի մեր միամիտ ժողովուրդը, մանաւանդ Հայաստանցին, կը հաւատայ թէ Ռուսիոյ տիրապետութեան տակ անտեսապէս հանդիստ կեանք պիտի ունենայ, եւ «խաշապաշա մոսկփին» շնորհիւ իւրամենքէ վէթ բարոյական վրիժառու պիտի ըլլայ: Հիմակուց ջնջինք այդ նախապաշարումն ալ:

Ա. Ա.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ,
ԻՐ ԴԵՐԸ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ

Բ.

Հ Ա Յ Ո Յ Հ Ի Ն Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Ինչ որ կը մնայ հին Հայոց գրականութենէն՝ կրկատար կերպով կ'արտայայտէ ցեղը: Եկեղեցիի գրականութիւն մըն է: Ո՛չ հիշէն պարութեանց պէսպիսութիւնն ու կատարելութիւնը ունի, ո՛չ ալ կարգ մը արեւելեան մատենագրութեանց յորպառատ ու հեշտաւէտ պերճութիւնը: Կարծր է ու միօրինակ:

Այս ազգատութիւնը, այս միօրինակութիւնը կը մեկնուին բազմաթիւ պատճառներով: Նախ, այդ գրականութիւնը պատկազերծ է եղած իր ամէնէն իսկատիպ մասէն. հին պիւրապիւրական հեթանոս բանաստեղծութիւնը զբրիթէ ամբողջութեամբ կորուսած է: Քրիստոնէութեան տիրապետումը ժողովրդին մտքին մէջ ջնջած է այն բերթուածները որոնցով հայ այեպները հինաւուրց զիցարանական կամ հերոսական վէպերը երշած էին: Աւանդու-

թեան համեմատ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, որ քրիստոնէութիւնը յաղթական տարածեց Հայաստանի մէջ, կործանեց ո՛չ միայն հեթանոս մեհեմանները, այլ և այն բանաստեղծութիւնները որոնք հայ հեթանոսութեան զիբերն ու հերոսները կը փառաբանէին: Պատմագիրները կը հաղորդեն թէ, հակառակ քրիստոնէութեան վերջնական հաստատման, ժողովուրդը զեռ կը սիրէր, մինչեւ Ժ. դարուն վերջերը, այդ վաղնջուց վիպասանութիւնները երգել: Բայց այդ իրողութիւնը յիշած են՝ միայն որպէս զի ժողովուրդը այգաննէն. եւ իրենց գրուածներուն մէջ զանց առած են պահպանել, զոնէ հետաքրքրութեան համար, հին հայ մտքին այդ թանկագին մնացորդները: Մակայն այն շատ սակաւաթիւ հատուածները զոր ժամանակագիրները յիշատակած են, կը բաւեն մտածել տալու թէ հեթանոս Հայաստանին մէջ գոյութիւն ունէր թրթռուն, լուսաւոր ու խրոխտ բանաստեղծութիւն մը: Ճարտարարուեստ, իմաստասիրական ձգտումներով, այլազան ձևերով բանաստեղծութիւն մը չէ անշուշտ. ժողովրդական բերթութիւն մըն է՝ այեպնքէ յօրինուած, արքայական կոչունքներուն, մեծ թագմանց ու մեծ հարսնիքներու հանդիսաւորութեանց եւ կրօնական տօներուն երգուած: Առնական բանաստեղծութիւն մըն է՝ հզօր պատկերներով: Այդ հատուածներուն ամէնէն կարեւորներէն մէկուն մէջ կը գտնենք նշոյլ մը զիցարկական բերթութեան. սողերը հրաշապատում ծնունդը կ'երգին սաստուած-արքայ Վահագնին, բաշտութիւնն ու արեւը ներկայացնող աստուածին:

Երկնէր երկին եւ երկիր,
Երկնէր եւ ծիրանի ծով,
Երկն ի ծովուն սունէր զկարմրիկ եղեգնիկն.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր,
Վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աշխունքն էին արեգակունք:

Ուրիշ հատուած մը, միամիտ ու վայրի շնորհով, կը պատկերէ մէկ սիրային զրուակը Արտաշէս Բ. թագաւորին որ Ալանաց արքային աղջիկն առեւանգեց.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ,
Եւ հանեալ զսակեօղ շիկափոկ պարանն
Եւ անցեալ՝ որպէս արծուի սրաթեւ՝ ընդ գետն,
Ընկէց ի մէջը օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց զմէջը փափուկ օրիորդին՝
Արադ հասուցեալ ի բանակն իւր:

Երբորդ հատուած մը մեղամաղձիկ ու մարդկային լարը կը թրթռացնէ. բարի Արտաշէս արքան է որ իր կեանքին վախճանին մօտ կարօտով կը յիշէ պայծառ առաւօտն ու

մանորին՝ զոր հին Հայերը զարնան սկիզբը կը տօնէին .

Ո՛ր տայր ինձ զձուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եզանց եւ զվազել եղջերուաց .
Մեր փոյ Հարուար եւ թմրկի Հարկանէար :

Այս բանաստեղծութիւնները շատ բազմաթիւ ըլլալու էին : Հայը քնարերգակ է խառնուածքով : Ամէն առանձնաբար սիրած է քանաստեղծութիւնը, որ անոր հանրապիտան անհատական կեանքին էական մէկ տարրը կազմած է : Ժողովուրդը միշտ իր երգիչներն ու եղերամայրերը ունեցած է . արքունիքին մէջ, բանաստեղծները կը սիրուէին ու կը պատուուէին . թագաւորները կ'ախորձէին որ անկորուստ ձայն մը զիրենք երգէր . եղան նոյն իսկ արքայորդիներ որ խանգով ու եռանգով բանաստեղծութիւնը մշակեցին . Մեծն Տիգրանի տղան, Արտաւազ Ա., զոր Անտոնիոս գերի տարաւ Ալեքսանդրիա, յունարէն լեզուով շատ մը ողբերգութիւններ գրած էր, որոնք մեծ յաջողութեամբ կը ներկայացուէին մինչեւ Պլուտարքոսի ժամանակը, որ անոնց մասին կը խօսի . եւ Վրոյր, Արտաշէս Բ. թագաւորին տղան, պատմութեան մէջ մեկեւնասի եւ ընտիր բանաստեղծի համբաւ ձգած է : Նոյն իսկ քրիստոնէայ թագաւորներուն մէջ եղան զպրութեանց պաշտպաններ՝ ինչպէս Վասիլապուհ, եւ քերթութեան բարեկամ իշխաններ, ինչպէս Սահակ Բագրատունի, Վահան Ամատունի եւ Գրիգոր Մագիստրոս, որ ինքն իսկ մեծ գրահմուտ մըն էր եւ Պղատոնի քանի մը գործերը թարգմանեց : Հեթանոս քերթուածները այնքան այլազան ըլլալու էին սրբան բազմաթիւ . Ժողովրդին բարբերը կը նկարէին, անոր տարփանքները, սուգերը, փառքերը կ'երգէին . ցուցական տեսարաններով, պարի երգերով, կրօնական նուագներով, յաղթական քերթուածներով կամ ողբարկու մրմունջներով, արքաներուն ու հերոսներուն կեանքը կը փառաւորէին եւ ազգային աւանդութեանց հրաշալի պատմութիւնը կը վիպէին :

Բայց եթէ քրիստոնէայ քրոնիկադիները այդ հին պուէաներուն տաղերէն շատ քիչ կը յիշեն, անոնց քերթուածներուն նիւթը կազմող զրոյցներէն ու աւանդութիւններէն բաւական թուով հազորդած են : Միայն թէ արհամարհու անհոգութեամբ կը համարուէին զանոնք ու յաճախ կ'այլալին, եւ հեթանոս բանաստեղծութեան այս շնորհը կ'ընեն՝ միմիայն Հայաստանի հին կեանքէն պատմական ուրուագիծ մը երեւան հանելու համար : Նոյն իսկ Մովսէս Խորենացի, որ ամէնէն աւելի պահպանած է այդ հաստատութիւնն ու աւանդութիւններէն, զանոնք կը թուէ խառնի-խուռն, առանց մեկնաբանութեան, առանց ընդլայնման : Եւ ցաւալի է աս, վասն զի, այն բանաստեղծական շունչով զոր ունի, Խորենացի կրնար, — եւ այդ էր բազմանքը Բագրատունի իշխանին որ անոր ապսպրած էր Հայաստանի հին գիւցազներուն պատմութիւնը գրել, — յօրինել տեսակ մը հայ Շահնամէ՝ ժողովրդական աւանդութիւններովը, հեքիաթներովը, երգերու հատուածներովը ու

օտար պատմապիւրներու մէջ քաղուած տեղեկութիւններովը :

Այս հին հայկական բանաստեղծութեան կորուստը ողբալի է մանաւանդ անոր համար որ ասիական մաքրի ու արեւմտեան ողիին հետաքրքրաշարժ խառնուրդ մը ընծայելու էր ան : Հայաստանը, Ասիոյ ու Եւրոպայի մէջտեղ գտնուելով, կրած ըլլալով Ասիոյ բոլոր մեծ հին ցեղերուն տիրապետումն ու այդ բոլոր այլազան քաղաքակրթութեանց ազդեցութիւնը, եւ միանգամայն կանուխէն հեղին ողիին հետ շփման մէջ մտած ըլլալով, իւրացուցած է շատ մը գիցաբանութիւններ եւ շատ մը գեղեցկադիտութիւններ : «Այդ լեոնական բայց հրաշալի զիրք ունեցող մէկ քանի զաւանները, գրած է Էմիլիօ Քասթելանո՝ Հայաստանի վերայ ստուգասիրութեան մը մէջ, բոյն եղած են Յունաստանի բանաստեղծական ողիին՝ սեմական ցեղը հմայելու համար . այդ թափանցիկ լիճերուն եւ այդ ջինջ սոռունքուն մէջ պահուրտած, հեղին յուշկապարիկը իր երգերը կը հնչեցնէր խոտաբարոյ Սեմականը հմայելու համար . . . Եւ որովհետեւ յոյն հանձարը, պատմութեան մէկ ընդհանուր օրէնքին համեմատ, Ասիոյ երակներուն մէջ պարտ էր տարածուիլ՝ որպէս զի անոր զարձնէր կեանքը որ անկից առած էր, շէր կրնար մտնել Սաղոմոնի տաճարին գոնիքն որոնք փակ էին ամէն օտար զազափարի, իր գանձերը թափած է Հայաստանի կիրճերն ի վար, որպէս զի ասիական ժողովուրդները իրենց անհունութեան ծառար յագեցնէն նոյն իսկ իրենց կեանքին հեղեղին մէջ՝ մաքրագործուած հեղինական հրաշալի հանձարին անցքովը : » Բոլոր այդ ցեղերը, բոլոր այդ քաղաքակրթութիւնները, բոլոր այդ պէսպէս աշխարհները իրենց հետքերը թողած են Հայաստանի բեղմնաւոր հողին վրայ : Այդ ամէնէն յառաջ եկած է տարօրինակ ու իսկապարհ ձուլում մը : Հին հեքիաթներու կտորուանքներովն ու այդ բազմակնճիտ գիցաբանութեան վրայ մնացած տեղեկութիւններովը, կրնանք հիմա մինչեւ աստիճան մը վերականգնել հայ գիցապիւրնու աշխարհաքաղաքացի տաճարը : Բոլոր աստուածները հոն գահ են սենեցած : Կը հանպիպինք այնտեղ ասորեստանեան, քաղդէական, փոնիկական ու պարսկական խորհրդաւոր ու մեծազանգուած աստուածութիւնները, Յունաստանի ու Հռոմի զիջերուն բարակ դէմքերուն հետ, զուտ հայկական աստուածներուն յուզիչ անդրիններուն շուրջը : Ամմոն հոն Ապոլոնը կ'արմկեցէ, Պալլաս Աթենէ թարագային գրացի է, Հեփեսոս Բելին հետ գէմ գիմաց կուգայ, Հերակլէս ու Զեւս Բարշամին ու Նաբոլզին կ'եղբայրանան . եւ այդ ամէն ցեղէ աստուածներուն կաճառին մէջ, կ'որոշուին մէկ քանի հայ զիջերը, որոնք, թէեւ օտարամուտ այլեւայլ տարրերէ կազմաւորուած, հայ մաքրի անձնական գրաշար կը կրեն . աստուածներ են որ ո՛չ ասիականներուն գլխիմ բարբարոսութիւնն ու վիթխարի մթին մեծութիւնը ունին, ո՛չ ալ յունականներուն հեշտաւէտ ու պայծառ գեղեցկութիւնը . աշխատող, ժուփկալ ու բարի աստուածներ են . Անահիտ, մայրական աստուածուհին, Ոսկիամայրը, աշխատութեան ու ժուճկալութեան զիցուհին, հարստութեանց բաշխիչը, Հայոց ամէնէն սիրելի եւ ամէնէն մեծարոյ ստուածութիւնը . Աստ-

ղիկ, դեղեցիութեան զիցուհին, և իր զիւցազնական ասար-
 փաւորը՝ Վահագն, ուժին աստուածը, այն սր երկնքին
 ու երկրին երկանքէն ծնաւ, վիշապներուն հետ մարտնչե-
 ցաւ և Քարշամ աստուածին երկնաւոր բնակարանէն
 գողցած յարզը իր տունը բերած ասին տեղ տեղ թափեց
 երկնքն ի վար ու Յարզողը ձեւացուց. Արամազդի
 որդին, Միհր, կրակին ու լոյսին աստուածը, և այն որ
 բարի, անհարգախ ու գարովազին զգացումները կը ներշնչ-
 չէր. Նանէ, մայրութեան, ընտանիքին զիցուհին, սիրուն
 ու քաջ աստուածուհին որ հայ կինը կը խորհրդապատկերէր.
 Ամանոր, աստուածը կազանդին ու հիւրասիրութեան, և
 Սանդարամէտ, Արամազդի ամուսինը, երկրի ընդերք-
 ներուն զիցուհին: Յետոյ կուգան կիսաստուածները, ա-
 ւանդավիպական զիւցազունները. Հայկ, ցեղին հայրը,
 Քել բանաւորին սպանիչը. Արամ, որ վայրազ Նիքար
 թագաւորը նուաճեց, զանի գերի բանեց և իր ձեռքովը
 Արմատիբի աշտարակին կատարը ձակաւն դամեց. Արա,
 որ նախընտրեց իր գահն ու կեանքը կորսնցնել քան պիղծ
 Շամիրամին ամուսին ըլլալ. Տիգրան, որ Ալիսահակ բըռ-
 նաւորը սպաննեց. Արտաշէս, սքանչելագործ աշխարհա-
 կալը, այն որ բովանդակ աշխարհը իր լուծին տակ խո-
 նարհեցուց և սրուն զինուորները այնքան բազմաթիւ էին
 որ դաշտի մը մէջ քար նետելով լեւ մը կը ձեւացնէին և
 ամենը մէկանց նետ արձակելով արեւը կը խափանէին.
 Արտուազգ, մոլեգին զիւսհար արքայորդին, որ, իր հօր-
 մէն անիծուած, օր մը, Մասիս լեռան վրայ ձիարշուած
 ատեն, թաւալըսր ինկաւ անհուն զահալէժի մը մէջ և որ
 հոն՝ վիհին խորը կը մնայ կենդանի, ժայռերուն շղթայ-
 աւած, սպասելով այն օրուան որ պիտի դուրս ելլէ և աշ-
 խարհօ պիտի կործանէ. վերջապէս, Տորք հսկան, «խո-
 ժոռագեղ, ինչպէս կը նկարագրէ Խորենացին՝ երգիչներուն
 գրուցուածքէն աննելով, և բարձր և կուգտարանն և
 տափաքիթ, խորակն և գծնէհայեաց, ի զաւակէ Պասքամայ,
 ի Հայկակայ թոռնէ, Տորք անուն կոչեցեալ, որ վասն
 առաւել ժահագիծութեանն ձայնէին անդեղեայ, վիթխարի
 հասակաւ և ուժով,» որ ավերուն մէջ ապաստանի կը
 փշրէր, վիմզէն հաստուածներու վրայ եղունգներովը ար-
 ժիւներ կը գծէր, և որ, օր մը, արեւելեան Պոլիփէլ, Պոն-
 տոսի ծովուն մէջ բազմաթիւ նուեր ընկզմեց՝ բլուրի մը
 գագաթէն արձակելով խոշոր ժայռեր որոնք փոթորիկ յա-
 րուցին:

Իրարմէ սյնքան ասարբեր մտածմանց ու ձեւերու այս
 արտասովոր միացումը անշուշտ ծնունդ տուած էր հա-
 րուստ ու բազմերանց բանաստեղծութեան մը սրուն մէջ
 Արեւելքի յարգաբուխ ու անասնձ երեւակայութիւնը մեղ-
 մացած ըլլալու էր Արեւմուտքի Արիականներուն ներդաշ-
 նակ ոգիէն: Քերթնուածի կտորները, գրուած հակիրճ ու
 մաքուր սծով, ազնիւ լեզուով, առանց ճոռուութեան, ու
 լայնօրէն խորհրդանշանական, ասոր բաւական ապացոյց
 մըն են արգէն: Երկու ոգիներուն այս բնագրձակ միաց-
 ման աւելի կարեւոր վիպայութիւն մը կը գաննէր հայկական
 ճարտարապետութեան մնացորդներուն մէջ. ժամանակը,
 քրիստոնէութիւնը և բարբարոսներու արշաւանքները զրե-
 թէ ամբողջապէս ջնջած են իհնութիւնս Հայաստանին նախ

կին ճարտարապետութիւնը, որ այնքան հարուստ էր շքեղ
 պալատներով ու մեհաններով՝ պատմագիրներու նկարա-
 գրութեանը համեմատ, և որ խառնուրդ մը ըլլալու էր հել-
 լէն սծին և ասորեստանեան, պարսկական սծերուն. բայց
 նոյն երեւոյթը կը տեսնուի քրիստոնէայ Հայաստանին
 ճարտարապետութեան կարեւոր նշխարներուն մէջ. Անիի
 եկեղեցիները, Հայաստանի շատ մը վանքեր և եկեղեցի-
 ներ և հայ ճարտարապետներէ կառուցուած Բաշտիպ մէկ
 քանի հին եկեղեցիներ՝ մասնաւոր սծ մը կը յայտնեն որ
 խառնուրդ մըն է արաբական ու բելգանդական ճարտարա-
 պետութեանց: Այս վարկածին մէկ կենդանի ապացոյցն
 ալ, նոյն իսկ ցեղին լեզուն է, այդ հին հայերէնը, ճոխ,
 կնճոտ, մեծաշուք, համաձայնութեան ամէնէն արտա-
 կարգ քմայքներն իրականացնելու ատակ ու միանգամայն
 կարող ճիւղու մինչեւ յունարէնին վճիռ շնորհը և ֆրան-
 սերէնին պայծառ կարգաւորութիւնը:

Քրիստոնէութիւնը կը հասնի և կը քանգէ այդ հին ու
 գողոր մուտնը: Կը կերպարանափոխէ ցեղին ոգին, նոր
 հօգի մը կուտայ անոր: Եկեղեցիի մարդիկ ազդին գլուխը
 կ'անցնին, կը տիրապետեն անոր, նոր կողապարի մը մէջ
 կը սեղմեն անոր հոգին ու միտքը: Եւ եկեղեցին դիւրա-
 թեամբ կը կատարէ այս հոգեփոխութիւնը անոր համար որ
 Հայաստանի մէջ իր մուտքը հեռը կը բերէ նաեւ բազա-
 քակրթութեան հօրը ու վերջնական շարժում մը: Մինչեւ
 այն ատեն ցեղը աւելի բնագրական կեանք մը ունեցած
 էր. մարտնչած, երազած, երգած էր առանց ո և է որոշ
 բանաձեւի, առանց հաստատուն օրէնքի մը, ազատ ու
 արձակ: Եկեղեցին բերաւ զարգացումը, կատարելագործեց
 հայկական այբուբենը և սկսաւ զբաւոր մասնագրու-
 թիւնը:

Դ. գարուն եղաւ ասիկա: Այդ միջոցին, քրիստոնէայ
 եկեղեցին ամենուրեք կը տիրէր, և իր զրականութիւնը
 աշխարհի վրայ կը թաղաւորէր: Քրիստոնէութեան առա-
 շին հայ քարոզիչները, որոնք միանգամայն նոր քաղաքա-
 կրթութեան առաջին ներմուծիչները եղան Հայոց մէջ,
 իրենց ուսումն առած էին Բելգանդին, Հոռո, Աթէնք կամ
 Աղեքսանդրիա. սնած էին Աստուածաշունչէն և Ս. Հայ-
 բերու զրականութեամբը. հայերէնի թարգմանեցին Ս.
 Գիրքը և Հայերու գործերը, և այն զրականութիւնն ալ
 դր արտադրեցին՝ Եկեղեցի կը հոտէր: Ս. Գրիգոր Լու-
 սաւորիչ թողուցած էր քարոզներ ու աղօթքներ. Եզնիկ
 գիրք մը յօրինեց Յունաց և Պարսից հեթանոսական ա-
 զանդները հերքելու համար. Դաւիթ անյաղթ, որ հեթա-
 նոս Յունաստանին զրականութեամբն ու փիլիսոփայու-
 թեամբը զբաղեցաւ, այդ գործը կատարեց նպատակ ունե-
 նալով անոնց ունայնութիւնը ցուցնել Աւետարանին լոյ-
 սին հանդէպ. Ագաթանգեղոս պատմեց կեանքը Լուսա-
 ւորչին ու Տրդատ՝ առաջին քրիստոնէայ թագաւորին:
 կորին վարքը զրեց սուրբ Մեսրոպին, հայ եկեղեցոյն ու
 հայ զրականութեան այդ նշանաւոր հօրը: Փաւստոս Բիւ-
 զանդացի վիպեց Հայաստանի պայքարը Սասանեան Պար-
 սից հետ, և գծեց մեծ քրիստոնէական գէմըր Ներսէս
 Պարթեւ կաթողիկոսին, այդ պարոյցներու, վանքերու, որ-

բանոցներու հիմնադիր, մեծհոգի հայրենասէր, բանաստեղծ ճարտասանին, եւ անոր քով պատկերացուց զէմքը Արշակ Բ.ին, այլ ինքնատիպ, զեռ հեթանոս եւ շատ ասիացի թագաւորին: Ուրիշներ շարագրեցին եկեղեցական երգեր, աղօթքներ եւ սուրբերու վարքեր. եւ անոնք իսկ որ ուզեցին երկրին քաղաքական զեպքերը պատմել, իրենց վիպումը բեանաւորեցին կրօնական խորհրդածութիւններով. փոխանակ առողջ եւ անկողմնակալ քննադատութեամբ մը նկատուելու, պատմական իրողութիւնները կը մեկնուէին քրիստոնեայ Եկեղեցւոյն տեսակէտովը: Ամէն բան կապուած էր Աստուծոյ, որ էական մտածումը կը դառնար: Հայ ժողովուրդը եկեղեցին նկատեց իբր հայրենիքին հոգին, իբրեւ կենդանի անձնաւորումն իր անհատականութեան. իր ոգին տրտմեցաւ այդ միասնական ստուերին մէջ. հոն կորսնցուց մտաւորական անկախութիւնը, բայց շահեցաւ այլապէս հզօր ուժ մը, հաւատքին հիւանդագին ուժը, մարտիրոսութեան ուժը: Եւ երբ արշակունիան հարստութիւնը կործանեցաւ եւ Հայաստան քաղաքական անկախութիւնը կորսնցուց, ժողովուրդը Եկեղեցիին կառչեցաւ: Պարսկաստանի քաղաքական լուծը ընդունած էր, բայց երբ Սասանեան Յակերտը ուզեց զինքը ստիպել մագեղանաց կրօնքը ընդունելու, բարոսացաւ. եւ այն ատեն տեղի ունեցաւ այն հիանալի քրիստոնէական զիցագահներգութիւնը զոր ազգը քառորդ դարու շափ ապրեցաւ: Երուսաղեմ, տիրապետուած, զրեթէ անգօր, Հայաստան քաջասրտութիւն ունեցաւ ինչպէս զիմպրուրթիւն մը հանելու պարտիկ բանակներուն վիթխարի զօրութեանը զէմ: Վարդան Մամիկանեան եւ իր հազարաւոր զինակիցները գացին ազգային Եկեղեցին պաշտպանել Պարսից զէմ. թշնամոյն ստուար մեծամասնութիւնէն ջախջախուեցան. բայց իրենց արիւնը Եկեղեցին ազատեց. առաջին մարտիրոսներուն օրինակը սարածուեցաւ ամբողջ ժողովրդին մէջ. խուլ, յամառ պայքար մը շարունակուեցաւ. Պարսկաստանը, հալածանք հանելէն յոգնած, որոշեց թողուլ որ Հայերը իրենց Աստուածը պաշտեն: Բարոյական յաղթանակ մը եղաւ այդ զօր տկարը զօրաւորին զէմ կը տանէր. Հայերը ատիկա հասկեցան եւ Վարդանանց զիմպրուրթիւնը նկատեցին իբրեւ ամէնէն գեղեցիկ էջը իրենց պատմութեան: Սրբազան պատրիարքը ազգային մեծ անդուրթիւնը եղաւ: Եղիշէ պատմաբանը, ժամանակակից եւ ակնատես, այս պայքարը պատմեց զրբի մը մէջ որ անմահացուց հերոս—մարտիրոսին զէմքը:

Ալ այնուհետեւ, եկեղեցին, ազգն ու զրականութիւնը աւելի սերտ կերպով իրարու կապուեցան. երեքը մէկ եղան: Ազգը Եկեղեցիին մէջ գտաւ իր ցաւերուն միթիթարութիւն մը, նեցուկ մը եւ սպաստանարան մը ուր իր անձնաւորութիւնը կրնար պատասխարուիլ եւ ինքզինքը պահպանել իրեն հետզհետէ տիրող բոլոր հզօր ցեղերուն խառնուելէ: Գրականութիւնը որ եկեղեցւոյն ու ազգին այդ միացումը պատրաստած էր, ա՛լ այդ ձուլման բորբոքեալ ու մղիչ արտայայտութիւնը եղաւ: Միշտ մնաց եկեղեցականներու ձեռքը, եւ բազկացաւ շարունակ միասնական քերթուածներով, աստուածաբանական խոկումներով եւ կրօնական ձգտում՝ ունեցող քրոնիկներով:

Եկեղեցւոյն սահմանափակիչ ազդեցութեանը կը միա-

նար ուրիշ պատճառ մը, շատ աւելի զօրաւոր, մտաւորական կայունութեան. այն էր ազգին մշտական յօշուտ մը յաջորդաբար Հայաստանը աւերելու եկող աշխարհակալ ցեղերուն ձեռքով: Երկիրը բաց ճամբայ մը դարձաւ բոլոր արշաւանքներուն, ամէնէն ահեղ շարչարանքները, ամէնէն ծանր լուծերը կրեց: Փորձանքները մեծ էին. ազգին ճակատագիրը ամէն վայրկեան կեանքի ու մահուան մէջ կը տատանէր: Գրականութիւնը շարունակական սաղմոսներգութիւն մը դարձաւ: Մինակ նորութիւնը կը կայանար սա կէտին մէջ որ պատմական մասը, փոխանակ փառաւոր զէպքեր յիշատակելու եւ երբեմնի քաջայաղթ արքաները երգելու, հետզհետէ երկայն աւաղանք մը կը դառնար խաչահանուած Մայր—Հայրենիքին թշուառութեանը վրայ, կոտորածներու եւ աւերմանց ողբերգական պատկերները կը գծէր, կամ ազգային եկեղեցւոյն համար արիւն թափող զիւցագներուն յիշատակը կը փառաւորէր: Քաղաքական մտահոգութիւնները ամէնէն աւելի կարեւոր գաղնալու, մտաւոր մշակութեան միջոցներն ու երկայն ու սուսնասիրութեանց ժամանակը պակսելով, զրագէտները կորսնցուցին լեզուի մաքրութիւնը, ոճի ազնուութիւնը որով փայլած էին Ե. դարուն մատենագիրները, եւ Ժ. դարուն՝ Բագրատունեաց օրով՝ երկրորդ վերաբողոքումը մը, եւ ԺԲ. դարուն, Կիլիկիոյ մէջ, Ռուբինեանց օրով, երրորդ վերածնութիւնէ մը յետոյ, լեզուն վերջնապէս աղաւաղուեցաւ, գրականութիւնը ինչպէս անկերպարան խառնաշփոթութեան մը մէջ, եւ քաղաքական կեանքը արմատացի ջնջուած բլլալով՝ Կիլիկիոյ սուրբնեան թագաւորութեան անկմամբ, մտաւորական մեծ մահը սկսաւ, որ պիտի տեւեր մինչեւ այս դարուս մեծ զարթնումը:

Իր ամբողջութեանը մէջ նկատելով, Հայաստանի այս քրիստոնէական գրականութիւնը, հակառակ իր միօրինակութեանը, հակառակ յաճախազէպ անարուեստութեանը, կը ներկայացնէ մասնաւոր շահեկանութիւն մը եւ տեսակ մը մուշկ ու ինքնատիպ զեղեցիկութիւն: Ողբի մեծ ու ամուր միութիւն մը ունի. հզօր համոզման մը վրայ կը յենու, եւ ցաւին արտայայտութիւնն է ժողովրդի մը որ տառապած է ինչպէս թերեւս ոչ մէկ ժողովուրդ չէ տառապած, եւ, այս տեսակետով, անի վեհապանծ է տրտմութեամբը, պատկանելի՝ իր արիւնստ զրգլեակներուն մէջ:

Պարզ է, անարատ ու ծանրաշուք: Աշխարհիկ ամէն զարդարանքէ, առասպելին բոլոր հմայքներէն, արուեստին բոլոր պշտանքներէն զերծ է: Մերկ է ան իր արիւնով բրձաւորուած ոսկի շուրջափն մէջ: Չեւի միութիւն նիւթի միութեան հետ: Ոչ վէպ, ոչ զիւցագներգութիւն, ոչ թատերգութիւն: Աղօթերգութիւն մըն է: Իր զիւցագներգութիւնը՝ սրբազան պատերազմներուն պատմութիւնն է, Հայրերու եւ Սուրբերու վարքն ու մեծ մարտիրոսութեանց նկարագրութիւնը. իր վէպը, Աստուածաշունչն է. եւ իբր թատերգութիւն, եկեղեցւոյն վեհատեսիլ արարողութիւններն ունի: Եւրոպացի ճամբորդները որ այդ արարողութեանց համդիտտեսիս բլլալու առիթ ունեցած են, անոնք վսեմ նկարագրէն ու ողբերգական մեծութիւնէն խորապէս

ազգուած են: Վիլֆուա արբան, քրիստոնեայ Հայաստանով զբաղող առաջին եւրոպացի զրադեաներէն մէկը, անցեալ դարուն սկիզբները կը գրէր. «Ոչինչ կարելի է տեսնել աւելի պերճախօս եւ աւելի սրտաշարժ քան հայկական ազօթքներն եւ աւելի վեհ քան արարողութիւնները:»

Հայր որ երբեք իսկատիպ թատերադրութիւն ունեցած չէ, կրօնական արարողութեանց մէջ խորին թատերական ըզրացում կը յայտնէ: Անոնք հին յունական թատրը կը յիշեցնեն, պատարազը ամբողջ ողբերգութիւն մըն է: Պատարագիչը, գլխաբաց, բոկոտն, բազկատարած, փողփողուն շարձառօն զգեստաւորուած, կերտներով, սսկիւններով ու ծաղկներով լուսավառուած խորանին առջեւ կանգուն, ծնրադիր ամբօխին առջեւ՝ կը ներկայացնէ տառապազին մարդկութեան աննշանքը դէպի աղբիւրն արդարութեան ու զեղեցկութեան: Տոմար օրուան համեմատ կը փոխուի. աւագ հինգշաբթի օրը, եկեղեցին վերէն վար ճերմակ կը հագուի, եւ աւագ ուրբաթ օրը՝ կը սպաւորուի անհուն սեւ վարագոյրով որ խորանը կը ծածկէ: Աւագ հինգշաբթի գիշերը, եկեղեցին իր բարձր լոյսերը կը մարէ, խաւարին մէջ հնչեցնելու համար գերագոյն ողբերուն Տէր Ողորմեան. Երգիւցարդին իրիկունը, եկեղեցին կը ներկայացնէ վերջին դասաստանին խորհրդանշանը. եպիսկոպոսը, ծնրադիր, Արքայութեան մէջ ընդունուելու շնորհը կը հայցէ: Եւ երբեմն, հին հեթանոսութեան մնացորդներ այս սիրական քրիստոնեայ տոմարն պարզութիւնը կը ծաղկեւորեն. Այլափոխութեան օրը, մեծ թափօրի միջոցին, ժողովրդին վրայ վարդ կը ցանեն, եւ ազանիներ կը թոցնեն, Անահայտ աստիճան վազնուց սովորութեանը համեմատ. եւ Տեառնընդառաջի տօնին նախընթաց իրիկունը, եկեղեցոյն բակը խարոյկ կը վառեն, ի յիշատակ Միհրի տօներուն:

Ասկից զատ, որչափ ալ սահմանափակ ըլլայ, այդ եկեղեցական զրականութիւնը մերթ ընդ մերթ ամենաբարձր ներշնչմանց ելած հասած է: Քրիստոնեութիւնը յաջողեցաւ ցեղին մտքէն հեթանոսութիւնը ջնջել, բայց անոր քնարերգակ ու խանդավառ հոգին չանհետացուց: Երջանակի փոփոխութիւն մը եղաւ միայն: Հին երգիչը շարունակեց թրթռալ եկեղեցական օրհներգութեանց բանաստեղծին մէջ: Ոչ միայն հեթանոս պուէտին աւելին բան մը մնաց, այլ նոյն իսկ զիցալիպական քերթուածներուն լուսաւոր զուարթութենէն, արեւտ պայծառութենէն. եւ բոցեղէն քնարերգութեան մը ժայթքումները կը լուսաւորեն այս քրիստոնեայ բանաստեղծութեան միտաբանական խաւարը: Արեւակ, լոյս, ճառագայթ բառերը, նախկին արեգակնային բանաստեղծութեան բարձր այդ գլխաւոր եղանակները յաճախ կը ցոլանան այս կրօնական բանաստեղծութեան մէջ, քրիստոնեայ Աստուծոյն գեղեցկ կը լուսապսակեն. «Լոյս, կ'երգէ այդ եկեղեցական բանաստեղծներէն մէկը՝ շլացուցիչ տողերով որոնք գրեթէ հեթանոսական են՝ հակառակ աստուածաբանական դիտաւորութիւններու, լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալը ի լոյսն անմատոյց, Հայր երկնաւոր, ի դասուց լուսեղինացն օրհնեալ, ի ծագել լուսոյ ա-

ռուտուս, ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:»

Եւ ահաւասիկ Այլափոխութեան տօնին մէկ շարականը որ, պայծառ բոցերով, վեսայական օրհներգի մը պէս, կը բարձրանայ. «Ճառագայթ փառաց Հօր՝ Որդիդ միածին, որ զլոյսդ անվայրափակ մարմնով պարագրեալ այսօր ի թափօր փառօք փայլեցեր: Որ անասն սրովբէիցն անհաս ի վեր քան զքան, ծառայի կերպիւ պարածածկեալ զլոյսդ անսուտեր, այսօր ի թափօր փառօք փայլեցեր: Որ հրեղինացն անմերձենալի հօր աստուածութեանդ, ի հողեղէնս խոնարհեալ լոյսդ արփիական, այսօր ի թափօր փառօք փայլեցեր:»

Եւ այս ճանաչարձակ պատկերները, այս ցնծութեան ու լոյսի բառերը, տարօրինակ հակադրութիւն մը կը ձեւացնեն ամբողջութեանը հետ այս թաղծագին ազօթքը գութեան, ուր ողբը կը ախրէ, եւ սրուն մէջ ստուար տեղ մը կը բռնեն մարտիրոսներու վրայ երգերը, բանտարկեալներու համար աղօթքները, փրկութիւն հայցող պաղատանքները՝ Տէր ողորմեաներուն ու մահուան երգերուն հետ:

(Շարունակելի) ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ (1)

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԸ

Կարծեմ թէ Նպաստի գործին վրայ կարճ բացատրութիւն մը չորս պուրիներու բաժնուած՝ շահեկան պիտի ըլլայ անոնց համար որոնք կը փափաքեն քիչ շատ աեղեկութիւն ունենալ այդ մասին.

- Ա.— 1895ի դէպքերէն անմիջապէս վերջ ժողովրդին վիճակը ի՞նչ էր.
- Բ.— Նպաստը ի՞նչպէս օգնեց անոնց.
- Գ.— Նոյն ինքն ժողովրդին մէջէն ազնուութեան եւ անձնութիւնութեան օրինակներ.
- Դ.— Ի՞նչ են ներկայ պահանջները:



Ա. 1895ի դէպքերէն անմիջապէս վերջ ժողովրդին վիճակը ի՞նչ էր.— Անոնք ամէն բանէ մերկացուած էին: Աւարառներու ոճրագործ խումբերը զիւղերու եւ քաղաքներու վրայ թափած էին եւ էրիկմարդերուն մեծ մասը սպաննելով, երբեմն կիներ ու մա-

(1) Հայաստանի արդի կացութեան վրայ ստոյգ աեղեկութիւն ունենալու համար, ստիպուած ենք այժմ գիւմել օտար աղբիւրներու: Այդ աղբիւրներն են անգլիական կառավարութեան «Կապոյտ Գրքերը» եւ Հայաստան հաստատուած միսիոնարներու եւ բարենպատակ օտար հաստատութեանց վարիչներու կողմէ իրենց կեդրոններուն զրկուած տեղեկագիրները:

Վերջին «Կապոյտ Գրքերը» գրեթէ ամբողջութեամբը ներկայացուցած ըլլալով մեր ընթերցողներուն, եւ սպա-

նուկներ ալ, իրենց կապուտ կողպուտին հետ անցած
 գացած էին՝ իրենց ետե արժէքաւոր բան մը չթողլով, եւ
 ինչ որ չէին կրցած տանիլ՝ կտոր կտոր ըրած էին: (Շատ
 մը գիւղեր գրեթէ ամբողջապէս այրուած էին: Տեղ մը 250
 տունէն 200ը կրակով ոչնչացած էին, ուրիշ տեղ մը
 150էն 120ը, երրորդ տեղ մը 160 տուներէն հինգը մի-
 այն թողուցած, մինչդեռ շատ ուրիշ տեղեր ծխացող աւե-
 րակներ միայն մնացած էին: Տուները զերբաւ չէին բո՛ւ-
 կած, այնպէս որ քարիւղի օգնութեան դիմած էին, բայց
 այս դեակիր հրոսակները այս մէթոտը ոչ թէ միայն ինչ-
 քեր ոչնչացնելու գործածած էին, այլ յաճախ մարդիկն
 ալ քարիւղով թրջած եւ յետոյ կրակ տուած էին անոնց:
 Այսպիսի չարաչար մեռնողներու մէջ կար բողբոջական
 քարոզիչ մը:)

Ուր որ տուները այրած չէին, կենդանի մնացողները
 օրերով գաշտերու ու լեռներու մէջ թափառելէ վերջ վերա-
 դարձած էին՝ ուրիշ ոչինչ գտնելով եթէ ոչ լոկ մերկ
 պատեր: Մինչեւ անգամ գոնէրը եւ պատահանները տա-
 րած էին: Աշունը վերջացած էր եւ ցուրտ ամիսները գա-
 նոնք կը դիմաւորէին. ձմեռուան պաշարները տարուած
 էին: Հանգրծեցին, անկողին, կերակուր, անօթներ, ար-
 ջաւ, ոչխար, զործիքներ, զրամ — ամէնը գողցուած:
 Յոյսն ալ իր թոփշը առած պացած էր եւ իր տեղ ստիկու-
 մը թառած: Ամէն ձայնէ, անօթութեանէն եւ ցուրտէն
 ահաբեկած ապաստանած էին ամայի շէնքերու մէջ (ժա-
 մանակին իրենց բնակարանները) սպասելով վախճանին:
 Շատ մը ընտանիքներ իրենց հաց վաստակողները կորսըն-
 ցուցած էին եւ միայն կիներ ու մանուկներ մնացած էին
 պոյութեան մը պայքարին համար: Ուսելու համար բան
 մը չգտնալով անոնք սկսած էին գաշտերու մէջ թափառել
 եւ խոտերու պզտիկ փուշեր ժողովել. կը սեսնուէին մա-
 նուկներ որոնք իրենց ձեռքովը խոտը կը քաշէին եւ կ'ու-
 տէին արմատը ու ամէն ինչ:

Քաղաքներու մէջ զրութիւնը քիչ մը աղէկ էր: Հա-
 բուստը աղքատացած էր, եւ այսպէս քանի մը օրերու ժա-
 մանակամիջոցին մէջ ամբողջ ազգ մը դառն չքաւորու-
 թեան մէջ նետուած եւ գրեթէ յուսահատած ու վշատած:

Բ. Ն պ ա ս ա ը ի ն չ պ է ս օ գ ն ե ց ան ո ն ց . — Բը-

սելով նորին որ չի պիտի ուշանայ, կը դիմենք երկրորդ
 աղբիւրին: «Նոր կեանք» միջոցներ ձեռք առած է Հա-
 յաստանէն Անգլիայի, Ֆրանսայի, Զուիցերիայի, Գեր-
 մանիայի, Շուէտի եւ Ամերիկայի կրօնական ու աշխար-
 հական բարենպասակ մարմիններու հասած տեղեկու-
 թիւները ամբողջովին ունենալու, ու այսպէս, անոնցմէ
 ընտրելով ինչ որ շահեկան է մեզի համար, կարենալու
 Հայրենիքին կացութեան վրայ ստոյգ ու նորագոյն լուրե-
 րը հաղորդելու անոր ցիրուցան գաւակներուն:

Այսօր կը հրատարակենք խարբերդի նահանգին վրայ
 քիչ շատ սիոփիչ եւ յուսատու տեղեկագիր մը որ ամիս
 մը առաջ խարբերդէն զրկուած է կալլէսի (Անգլիոյ) մէջ
 կազմուած Հայոց Նպաստամասոյց ընկերութեան եւ զոր
 հրատարակուած կը գտնենք «Նորթ Ուէլշ Թայմ»-ի
 մայիս 14ի թիւին մէջ:

լուրին գագաթէն, ուր խարբերդ քաղաքը կառուցուած է,
 միսիոնարները կարող էին տեսնել թէ դաշտին մէջ զբա-
 նուող գիւղերուն հրկիզութեան շրջանակը երթալով օրէ օր
 դժբաղդ քաղաքին եղբրը կը պարուրէր: Աւարտուները
 սակաւին քաղաքը չմտած, անոնք ժողովրդին օգնութեան
 համար զիմուսներ ըրած էին, եւ իրենց առաջին հեռադիւ-
 ները՝ քաղաքին հրկիզումէն ու քանդումէն վերջ՝ այդ զի-
 մուսները կը կրկնէին: Միսիոնարական առանձնիկու շէն-
 քերէն ութ հատը աւերուած էին, եւ նոյն ինքն միսիո-
 նարները կողպատուած էին իրենց ամէն բաներէն. անոնց
 ձիերն ալ տարած էին. բայց հակառակ այս ամէնուն ա-
 նոնք կը խորհրդակցէին թէ ինչպէս կրնան այս կորստեան
 մասնուող ժողովրդին օգնել: Առանց Եւրոպայէն եւ Ամե-
 րիկայէն պատասխանի սպասելու՝ պատասխանին ինչ ըլ-
 լալը կանխագուշակած էին եւ սկսած նպաստ տալ, որով-
 հետեւ վստահ էին թէ քրիստոնեայ հասարակութիւնը պի-
 տի պատասխանէր իրենց զիմուսին: Ուստի քնակաճա-
 բար պիտի զարմանան թէ ո՛ւստից զրամ ստացան գործը
 սկսելու: Խարբերդի վաճառականներէն մէկ քանին գետի-
 նը թաղուած զրամ ունէին գոր խուժանը չէր գտած, եւ
 երկու երեք օր անցնելէն վերջ երբ կացութիւնը քիչ մը
 հանգրաւ էր՝ զրամը հանած եւ միսիոնարներուն բերած
 էին, թոյլատրելով անոնց որ գործածեն մինչեւ զրամի
 հասնիլը: Միսիոնարները պատրաստ էին ուրախութեամբ
 այս բանը ընելու եւ յետոյ վճարած էին այդ մարդոց, ո-
 բոնք այսպէս լուռ վստահութիւն էին սնեցած իրենց
 վրայ:

Այդ մարդիկը ըսած ալ էին թէ զրամը աւելի ապա-
 հով պիտի ըլլար միսիոնարներուն մօտ, որովհետեւ խու-
 ժանին արարքներէն յետոյ պահանջող զինուորներու թոյ-
 լատուած էր միսիոնարական մնացեալ շուրջ շէնքերը պահ-
 պանելու: Դրամը կուգար նամակատան միջոցաւ, եւ Ամե-
 րիկայի Պարտ ընկերութեան կ. Պալտոյ գանձապահին վը-
 բայ քաշուած փոխորդը կը ծախուէին: Միսիոնարները
 թէ՛ թիւրքերու եւ թէ՛ Հայերու տեղանուորները զարձած
 էին եւ գրեթէ Եւրոպայէն ու Ամերիկայէն կ. Պալտո ու
 Հալէպ ուղարկուած բոլոր զրամները իրենց փոխանակա-
 վորներուն միջոցաւ կը փոխադրուէին:

Մեծ քանակութեամբ հացահատիկ գնուեցաւ եւ հան-
 դերձեղէններու ապսպրանք արուեցաւ նպաստի նպատա-
 կով եւ այս կերպով առեւտուրը վերակենդանացաւ. հա-
 գուսաններ կարելու համար այրիներ կը գործածուէին.
 բայց ամենամեծ խնդիրը հոն էր թէ ինչպէս կարելի էր
 252 աւաններու եւ գիւղերու համարիլ եւ բուռ մը զործա-
 ւորներով անոնց օգնել: Ճիշդ այն պահուն երբ Տոք-
 թոր կէլթա աւելի շփոթած էր՝ ժողովուրդը սկսած էր գալ
 գիւղերէն, բայց կերպով մը գտնոնք հետզհետեւ կա ճամ-
 բած էին ամէնուն ալ բան մը առալով: Այսպէս 79,183
 հոգի նպաստ ընդունած էին այդ առաջին ձմեռը եւ այդ
 նպաստը գտնոնք կենդանի պահած էր:

Անշուշտ ցուրտէ եւ անօթութեան խիստ նեղուողներ
 կային, բայց քիչեր կային սովամահ եղող. ամենալատ
 մահ պատճառողը ժանտաւտնիքն էր, որ թշուառութեան
 առաջ եկած էր, բայց այս ալ վախցուածին չափ վտան-
 գաւոր չեղաւ:

